# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 83-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 245-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 245-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2025 թվականի բյուջեի հանգստի և սպորտի ծառայություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ 739,15 քառակուսի մետր չափի շերտավարագույրներ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» և «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին նվիրաբերելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 203-Ա որոշման թիվ 33 հավելվածում փոփոխություն կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվարի 28-ի թիվ 45-Ա որոշումը առոչինչ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու վերաբերյալ համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու շահերը ներկայացնելու համար փաստաբանական ծառայություն ձեռք բերելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 81-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,00294 հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,0159 հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0,83229 հեկտար մակերեսով, 08-102-0210-0060 կադաստրային ծածկագրով հողամասը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,002հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,61161 հեկտար վարելահողը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,001հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,1233հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,06116հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից աճուրդային եղանակով 0,03728հեկտար հողամասը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից ուղղակի վաճառքով Անդրանիկ Աշոտի Համբարյանին ընդլայնման նպատակով հողատարածք օտարելու և օտարման գին հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Գ.Աղաքարյան փողոց 1-ին նրբանցք 1/10 հողամաս հասցեում գտնվող, 0,84504 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
18. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Թ. Տոնականյան փողոց 23 շենք, 49 հասցեում գտնվող բնակարանը Վահե Հրայրի Պապոյանին նվիրատվություն կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
19. Հաաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք գյուղում գտնվող, Ռաֆիկ Հայրենիքի Թորոսյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի առաջադրման մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
21. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի հերթական նիստի օր նշանակելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Թովմասյան | | |
| Աղամանյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Մարտիրոսյան | | |

Բաղդասարյան
Պետրոսյան
Չարչյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 84-Ն**

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 245-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 245-Ն որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Եկամտային մաս

1) «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» 1261 տողում գրված «180008200 մեկ հարյուր ութսուն միլիոն ութ հազար երկու հարյուր» թիվը և բառերը փոխարինել «216825200 երկու հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր» թվով և բառերով: /«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի թվով 12 բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագրի պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 55% - 30198900 /երեսուն միլիոն մեկ հարյուր իննսունութ հազար ինը հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ: «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ և Պեմզաշեն բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 45% - 6618100 /վեց միլիոն վեց հարյուր տասնութ հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:/

2) «Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» 1393 տողում գրված «15622000 տասնհինգ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «30260400 երեսուն միլիոն երկու հարյուր վաթսուն հազար չորս հարյուր» թվով և բառերով: /Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի «1238. Նախադպրոցական կրթության ծրագիր» ծրագրի, «12001. Սոցիալական որոշ խմբերի մինչև 5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում» միջոցառման իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացում՝ 14638400 (տասնչորս միլիոն վեց հարյուր երեսունութ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:/

2.Ծախսային մաս

1) Փողոցների լուսավորում բաժնի 06.4.1 դասակարգմամբ «Շենքերի և շինությունների կառուցում» (5112) հոդվածում գրված «0» թիվը և բառը փոխարինել «30198900 երեսուն միլիոն մեկ հարյուր իննսունութ հազար ինը հարյուր» թվով և բառերով: /«Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի թվով 12 բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագրի պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 55%:/

2) Ճանապարհային տրանսպորտ բաժնի 04.5.1 դասակարգմամբ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածում գրված «478632035» թիվը և բառերը փոխարինել «485250135 չորս հարյուր ութսունհինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար մեկ հարյուր երեսունհինգ» թվով և բառերով: /«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ և Պեմզաշեն բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 45% - 6618100 /վեց միլիոն վեց հարյուր տասնութ հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:/

3) Նախադպրոցական կրթություն բաժնի 09.1.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «676034000 վեց հարյուր յոթանասունվեց միլիոն երեսունչորս հազար» թիվը և բառերը փոխարինել «677869900 վեց հարյուր յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր» թվով և բառերով: /Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի թիվ 1169-Ն որոշման հավելվածի 12-րդ կետով սահմանված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ նպատակային ֆինանսավորում՝ 1835900 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:/ Այդ թվում «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «52503000 հիսուներկու միլիոն հինգ հարյուր երեք հազար» թիվը և բառերը փոխարինել «52723000 հիսուներկու միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար» թվով և բառերով: «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «58394000 հիսունութ միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար» թիվը և բառերը փոխարինել «58670200 հիսունութ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր» թվով և բառերով: «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «58559000 հիսունութ միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար» թիվը և բառերը փոխարինել «58851100 հիսունութ միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր» թվով և բառերով: «Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «40851000 քառասուն միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար» թիվը և բառերը փոխարինել «41072900 քառասունմեկ միլիոն յոթանասուներկու հազար ինը հարյուր» թվով և բառերով: «Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «36749000 երեսունվեց միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար» թիվը և բառերը փոխարինել «36928100 երեսունվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար մեկ հարյուր» թվով և բառերով: «Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «49183000 քառասունինը միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար» թիվը և բառերը փոխարինել «49445400 քառասունինը միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր» թվով և բառերով: «Անուշավանի Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «41079000 քառասունմեկ միլիոն յոթանասունինը հազար» թիվը և բառերը փոխարինել «41292100 քառասունմեկ միլիոն երկու հարյուր իննսուներկու հազար մեկ հարյուր» թվով և բառերով: «Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական

(համայնքային կազմակերպություններին)» (4511) հոդվածում գրված «32289000 երեսուներկու միլիոն երկու հարյուր ութսունինը հազար» թիվը և բառերը փոխարինել «32460100 երեսուներկու միլիոն չորս հարյուր վաթսուն հազար մեկ հարյուր» թվով և բառերով:

4) Հանգստի և սպորտի ծառայություններ բաժնի 08.1.1 դասակարգմամբ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» 4639 հոդվածում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար» թվով և բառերով: /«Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպության կողմից իրականացվող և «Ավստրիական Զարգացման գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ֆինանսավորվող Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրում իրականացվելիք «7 քար» բակային խաղերի փառատոնի համայնքի կողմից համաֆինանսավորման գումար՝ 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:/

5) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի 11.1.2 դասակարգմամբ «Պահուստային միջոցներ» (4891) հոդվածում գրված «556652200 հինգ հարյուր հիսունվեց միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր» թիվը և բառերը փոխարինել «566954700 հինգ հարյուր վաթսունվեց միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր» թվով և բառերով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Թովմասյան | | |
| Աղրամանյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Մարտիրոսյան | | |
| Բաղդասարյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Մկրտչյան | | |
| Վարագյան | | |
| Ասատրյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի մայիսի 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 85-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 245-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 245-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2025 թվականի բյուջեի Հանգստի և սպորտի ծառայություններ բաժնի ,,Այլ ընթացիկ դրամաշնորհներ'' (4639) հոդվածում նախատեսված գումարից՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, հատկացնել «Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը, որպես «Արագած հովիտ տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպության կողմից իրականացվող և «Ավստրիական զարգացման գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ֆինանսավորվող Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրում իրականացվելիք «7 քար» բակային խաղերի փառատոնի համաֆինանսավորման գումար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Թովմասյան | | |
| Աղրամանյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Մարտիրոսյան | | |
| Բաղդասարյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |

Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 86-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ 739,15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՉԱՓԻ ՇԵՐՏԱՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի դրույթներով, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին՝ Հայ աստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գույ քը՝ 739,15 քառակուսի մետր չափի շերտավարագույրներ, նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» և «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ շենքերի սենյակների կահավորման նպատակով, հետևյալ չափերով:

1) «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 254,92 քառակուսի մետր
2) «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 163,92 քառակուսի մետր
3) «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 220,0 քառակուսի մետր
4) «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 100,31 քառակուսի մետր

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» և «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագրեր:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան

Թովմասյան
Աղրամանյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Գևորգյան
Պետրոսյան
Մարտիրոսյան
Բաղդասարյան
Պետրոսյան
Չարչյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարազյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 87-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 203-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 33 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 203-Ա որոշման հավելվածի N 33-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 13-րդ կետի <<դրույք>> սյունակում՝ «13,5» թվի փոխարեն գրել «13,75» թիվը, «աշխատավարձի չափը» սյունակում՝ «1.485.000» թվի փոխարեն գրել «1.512.500» թիվը :
2) «Ընդամենը» սյունակում «դրույք 77,25» թվի փոխարեն գրել «77,5» թիվը , «աշխատավարձի չափը» սյունակում «12888750» թվի փոխարեն գրել «12916250» թիվը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Թովմասյան | | |
| Աղրամանյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Մարտիրոսյան | | |
| Բաղդասարյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |

Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարազյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 88-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվականի

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 45-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՌՈՉԻՆՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 05.1/05.8/8693-2025 գրությամբ ուղարկված առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայց ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվարի 28-ի թիվ 45-Ա որոշումը առոչինչ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջով:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին՝ հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Արթիկ համայնքի շահերի պաշտպանության համար օրենքով սահմանված կարգով ձեռք բերել փաստաբանական ծառայություն:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու շահերը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ներկայացնելու համար լիազորել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (8)** | **Դեմ (9)** | **Ձեռնպահ (4 )** |
|---|---|---|
| Ոսկանյան | Հարությունյան | Մարտիրոսյան |
| Թովմասյան | Տոնոյան | Բաղդասարյան |
| Աղամանյան | Վարդանյան | Պետրոսյան |
| Գևորգյան | Սահակյան | Չարչյան |
| Հովհաննիսյան | Մինասյան | |
| Գևորգյան | Ռափյան | |
| Պետրոսյան | Վարդանյան | |
| Ասատրյան | Մկրտչյան | |
| | Վարագյան | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 89-Ա

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 81-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետություն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Գ. Աղաքարյան փողոց 1-ին նրբանցք 1/10 հողամաս հասցեում գտնվող, 0,84504 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին» թիվ 81-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Թովմասյան | | |
| Աղրամանյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Մարտիրոսյան | | |
| Բաղդասարյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |

Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 90-Ն

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ 0,00294 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ սահմանված <<Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 13-րդ կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №01042025-08-0041 վկայականը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, աճուրդային եղանակով օտարելՀայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկի համայնք քաղաք Արթիկ Հ. Բաղրամյան փողոց 6/15 հողամաս հասցեում գտնվող, 08-002-0057-0222 կադաստրային ծածկագրով, 0,00294հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման հավելվածում նշված անշարժ գույքի աճուրդ-վաճառքը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան

Թովմասյան

Աղրամանյան

Գևորգյան

Հովհաննիսյան

Գևորգյան

Պետրոսյան

Մարտիրոսյան

Բաղդասարյան

Պետրոսյան

Չարչյան

Հարությունյան

Տոնոյան

Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարազյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 21-ի թիվ 90-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԻ ՉԱՓԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Հողամասի նպատակային նշանակու-թյունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Օգտագործման տրամադրման նպատակը | Աճուրդի ձևը | Աճուրդի նախավճարի չափը ՀՀդրամ | Հողամասի աճուրդի մեկնարկային գնի չափը ՀՀդրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկի համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 6/15 հողամաս | 08-002-0057-0222 №01042025-08-0041 | բնակավայրի | Հասարակական կառուցապատման | 0,00294 | Հասարակական կառուցապատում | բաց | 73500 | 147000 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 91-Ն

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ 0,0159 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ սահմանված <<Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 13-րդ կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №22042025-08-0027 վկայականը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, աճուրդային եղանակով օտարելՀայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկի համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 6/16 հողամաս հասցեում գտնվող, 08-002-0057-0229 կադաստրային ծածկագրով, 0,0159հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

2.Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման հավելվածում նշված անշարժ գույքի աճուրդ-վաճառքը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ**

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան
Թովմասյան
Աղրամանյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Գևորգյան
Պետրոսյան
Մարտիրոսյան
Բաղդասարյան
Պետրոսյան
Չարչյան
Հարությունյան

Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2025 թվականի մայիսի 21

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 21-ի թիվ 91-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԻ ՉԱՓԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Հողամասի նպատակային նշանակու-թյունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Օգտագործման տրամադրման նպատակը | Աճուրդի ձևը | Աճուրդի նախավճարի չափը ՀՀդրամ | Հողամասի աճուրդի մեկնարկային գնի չափը ՀՀդրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկի համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 6/16 հողամաս | 08-002-0057-0229 №22042025-08-0027 | բնակավայրի | Հասարակական կառուցապատման | 0,0159 | Հասարակական կառուցապատում | բաց | 397 500 | 795 000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92-Ն

Արթիկ համայնք 21 մայիսի 2025թվական

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0,83229 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 08-102-0210-0060 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ՝ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերով, 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 76-րդ հոդվածի 1-ին մասով, 94-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286-Ն որոշմամբ սահմանված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 47-րդ, 49-րդ կետերով, 63-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և 2025 թվականի ապրիլի 29-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29042025-08-0004 վկայականը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ գյուղում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, 2025 թվականի ապրիլի 29-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29042025-08-0004 վկայականով փաստագրված, 0,83229 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով վարձակալությամբ տրամադրելու առաջարկությանը:

2.Հողամասի վարձակալության տարեկան վճարի մեկնարկային գին սահմանել՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության,վարելահող գործառնական նշանակության հողամասի 1 հեկտարի համար 4560 (չորս հազար հինգ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, մասնավորապես՝ 2025 թվականի ապրիլի 29-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29042025-08-0004 վկայականով փաստագրված, 0,83229 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի համար 3796 (երեք հազար յոթ հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

